

ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈՒՆ

ՖԵԼԻՔՍԻ

Ձեռնարկելով ուսումնասիրելու նատուրալիստ բոմանը, մենք կանգ ենք առնում շփոթւած: Այս դործը բարձր չէ արդեօք մեր ոչ թերից: Անա քանի ամիսներ է, ինչ քրքրում եմ ծանօթութիւններին կոյտերը, դասաւորում եմ նրանց, լրացնում նկատածս թերութիւնները... Բայց բաւական է արդեօք այսքանը, հասկացել եմ արդեօք նատուրալիստ դպրոցի վեհ գրականական ուսմունքը, ըմբռնել եմ արդեօք նրա բազմաթիւ թերութիւնները?

Նատուրալիստ դպրոցը մի վիթխարի շէնք է, որը կանգնեցրած է դարիս գրական հսկաների ուսերին. — Բալզակի, Ֆլորբերի, Գոնկուրների և Զոլայի Մի ահագին սանդուխտ բարձրացնում է մեզ տասնութերորդ դարի կեղծ-դասական գրականութիւնից մինչև իրական սլալատի շէմքը, անցնելով բոժանտիսմի վրա:

Սքանչանում ենք և միևնոյն ժամանակ շփոթւում մօտենալով այս տիտանեան գործին, որի ահռելի մեծութեան առաջ ընկնում է մարդու վստահութիւնը:

Այս բազմադարկանի վիթխարի կառուցւածքը իւր ահագին աշտարակներով, որոնց զագաթը ճեղքում է ամպերը, ծածկում է մեր աչքերից դարիս հորիզոնը: Իւր լայնանիստ ապառաժեաց սլառերով, իւր հսկայական սիւներով և կամարներով, կարծես, դարերի աւերիչ ողուն արհամարհել է ուղում նա: Նրա գերբնական ճարտարապետները, կարծես, անմահութեան աշտարակներ էին կամենում կանգնեցնել:

Եւ այս վեհ շէնքը ներքեւից վերեւ քննելիս, մենք նկատում

ենք, որ յարկից-յարկ ճարտարապետութիւնը նրբանում է, կատարելագործուում:

Մինչդեռ ներքին յարկում գլխաւոր ճարտարապետական գծերի խառնուրդը ցոյց է տալիս, որ ճարտարապետը դեռ, կարծես, տատանման մէջ էր իւր շինւածքի ստիլը որոշելու համար, մինչդեռ այստեղ շինութեան նիւթերը անխարուժիւնով են գործ դրւած — ապաւաժի բեկորները մարմարինի և գրանիտի կողքին, — վերին յարկերում հեազհետէ կառուցւածքը աւելի ներդաշնականում է, ստիլը պարզապէս հաստատուում է, նիւթերը միաձեւանում են, քանդակները ու զարդարանքները աւելի ճոխանում և աւելի բնորոշւում: Ընդհանուր շէնքը աւելի շքեղանում ու նրբանում է:

Իսկ ներսը... Այս մի լաբիրինթոս է, որտեղ եռում է իսկական կեանքը, որտեղ յանկարծ բացւում է մեր առաջ մարդուս անդադար գործունէութեան, նրա տանջանքների ու երջանկութեան, նրա տառապանքների, քրտնքի և արիւնի տեսարանը: Մարդը, իսկական շոշափելի մարդը, մարդը ամեն դասակարգի, թագաւորից մինչև մուրացկանը, մարդը իւր ոսկորներով ու մկաններով, իւր հինգ զգայարաններով և ուղեղով, իւր աստուածային ու դժոխային կրքերով, իւր առաքինի ու գարշելի գործերով, — մի ապշեցնող, թույլիչ խրտուսն, կրքերի յաւիտենական ընդհարումն, կեանքի կուի մշտնջենական տաքնապը!...

Մեր գլխաւոր նպատակն է ուսումնասիրել այստեղ Էմիլ Զօլայի գործը: Սակայն նրան լաւ հասկանալու ու գնահատելու համար անհրաժեշտ է մի ականարկ գցել Բալզակի, Ֆլորբերի, Գոնկուրների և ուրիշների գործերի վրա, որովհետև այս վերջինների ջանքով է հիմնւել ու զարգացել նատուրալիստ դպրոցը, և Զօլան ինքը այս մեծ հեղինակներին իւր ուսուցիչներն է անւանում:

Երբ Զօլան գրականական ասպարէզ մտաւ, նատուրալիստ շէնքը արդէն բարձրացրել էր իւր հսկայական գլուխը դէպի երկինք և իւր յաղթական թևի տակ ջախջախում էր բոմանտիսմի անհիմն պալատը:

Բալզակից սկսած մինչև Զօլան իւրաքանչիւր նատուրալիստ վի-

պատան իրանից մի նոր կատարելագործութիւն է մտցրել բոմանի մէջ, նրանցից ամեն մէկը մի փառաւոր տեղ է բռնում այժմեան բոմանի պատմութեան մէջ: Մենք կ'աշխատենք ցոյց տալ իւրաքանչիւրի խաղացած դերը:

Այսպէս մենք կը պատմենք, թէ ինչպէս հիմնւեց նատուրալիստ դպրոցը, ինչ փոփոխութիւնների ենթարկւեց նրա ուսմունքը, որպէս զի հասկանալի լինի Զոլայի գործը:

Մենք կ'ամենում ենք իսկոյն և եթ զգուշացնել «Մուրճ»-ի ընթերցողին, որ առ այժմ մեր նպատակն է մի ամփոփ և, մեր հասկացողութեան համեմատ, ճիշտ տեղեկութիւն տալ նատուրալիստ բոմանի մասին:

Մենք չենք գնահատում, այլ միայն մեկնում ենք, վերապահելով մեր կարծիքը զրական բոմանի արժանաւորութիւնների և պակասութիւնների մասին այն դէպքին, երբ ձեռ կ'առնենք «Հոգեբանական դպրոցի» պատմութիւնը:

ՎԻԿՏՈՐ ՀԻԻԳՅՆ ԵՒ ԲԱԼԶԱԿԸ

Վիկտոր Հիւգոն իբրեւ բոմանտիստի հալըր:—Նրա ուսմունքը, նրա ազդեցութիւնը մեր դարի գրականութեան վրա.—Բալզակը:—Նրա հալեացքը բոմանտիստի վրա:—Միլիարդի (mille, million) ռաւմիասիրութիւնը.—Բալզակի գլխաւոր գործերը:—«Կեանքի նկարագրեր»:—Բալզակ և Շեքսպիր:—Արքայ Լիւր և Եօժեն Գրանդէ:—Ընդհանուր ակնարկ Բալզակի գործունէութեան վրա:

La passion, c'est l'excès,
C'est le mal.

Balzac.

Տասնիններորդ դարի շէմքին մի հսկայ է կանգնած, որին մանկութիւնից վիճակւած էր թաղաւորել մեր դարի գրականական աշխարհում: Նրա զօրեղ շունչը պէտք է անցնէր մի շարք սերունդների վրայով մինչև մեր ժամանակները: Անսանձ Փանտաղիա, կախարդիչ, յափշտակող լեզու — արհաւյն անդիմադրելի գէնքերը, որոնցով Վիկտոր Հիւգոն մեր դարի առաջին կիսի գրական աստուածը դարձաւ: Այս enfant prodige-ը, կարծես, ծնւել էր լուսեղէն պսակը ծակատին: Քսանհինգ տարեկան հասակում նա ժամանակակից գրակա-

նութեան գլուխ անցաւ և հիմնեց բոմանտիկ դպրոցը: Այս մի արտասովոր ողևորումն էր, մի յափշտակումն, որը մշտեմ էր երիտասարդներին դէպի Պարիզ, Հիւզօի դահլին երկրպագելու. 1830 — 1848 թւականներին Հիւզօն իւր փառքի զազաթնակէտին էր հասած:

Սակայն բոմանտիկ ուղղութեան հիմնելը մի մարդու գործ չէր, թէկուզ այդ մարդը Հիւզօն ինքը լինէր: Ինչպէս և ամեն մի բնական երևույթ, նա կամաց-կամաց էր որոշելու Վ. Հիւզօն երեան եկաւ իբրեւ այդ ուղղութեան մարմնացումն, նրան էր վիճակած իւր հսկայական ուսերի վրա կրել բոմանտիստի անհաստատ շէնքը:

Բոմանտիստի ուսմունքը անկասկած մի յափշտակող ուսմունք էր: Մեր կեղտոտ և ցաւալից աշխարից հեռացած, բոմանտիկ բանաստեղծը և վիպասանը շրջում էր ամպերի մէջ, որտեղ երեակայութիւնով մի նոր աշխար էր ստեղծում: Այս երեակայական աշխարը մեր երկրի հետ միայն հեռաւոր նմանութիւն ունէր: Ամեն ինչ տարբեր էր այնտեղ: Մենք, որ մտել ենք կեանքի մէջ, ծանաշել ենք մարդկանց, այնտեղ մի բոլորովին անծանօթ շրջանի մէջ ենք ընկնում: Այնտեղ բնութիւնը աւելի շքեղ է, ծաղիկներն աւելի հոտաւէտ, մարդիկ առասպելական հսկաներ են. — երկնքի հրեշտակներ, կամ դժոխային հրէշներ: Մարդկային գործերն էլ կրում են իրանց վրա այս իդէալացման կնիքը: Քանի որ նրանց հերոսները անբնական, շինծու անձնաւորութիւններ էին, սրանց գործերն էլ պիտի շինծու, անբնական լինէին: Մեր առօրեայ զբաղմունքները այս հսկաների արժանաւորութիւնից դաժ էին, — կարծես բոմանտիկ գրողները մի հիւանդ բորբոքման մէջ իրանց հայեացքը ասողերին էին սեւեռած և չէին զիջանում մի ակնարկ զցել իրանց հսկայական ոտերի տակ խլրտող կեանքի վրա: Այստեղից մնացել է Ֆրանսիական դարձածը. „cela tient du roman“ (սա բոմանտի է նմանում), երբ կամենում են ասել, թէ այս ինչ բան անհաւատալի է: Բոմանտիկ վիպասանները իրանք էլ այս լաւ գիտէին և ծործ Զանդը ասում է. „La vie ressemble plus à un roman que le roman à la vie“ (կեանքը աւելի է նմանում բոմանտին, քան թէ բոմանտը կեանքին): Այս է պատճառը, որ հին շկուրի բոմանտիստները՝ Վ. Հիւզօն, Եօժէն-Սիւլը, Դիւյմա-հայրը և այլն երբեմնայէս միայն վայր են գալիս իրանց իդէալական բարձրութիւններից և կարծես

վախվիտով, ամաչելով մի երկու էջ իսկական կեանքի նկարագիր տալիս...

Ընդհանրապէս ամեն ինչ շինծու էր այս բոմաններում. միջավայրը (milieu, среда) շինծու, հերոսները շինծու, այսինքն հեղինակի երեւակայութեան պտուղ։ Եւ, քանի որ հեղինակը իւր նկարագրած շրջանը ինքն էր ստեղծում և ոչ թէ իսկականից վերցնում, հասկանալի է, որ գրողի եսը իւր կրքերով և իդէալներով պիտի անշուշտ թափանցէր ամեն մէկ էջի միջից։ Հեղինակի անձնաւորութիւնը նրա իդէալը, նրա կրքերը, ինչպէս ասում են, կարմիր թելով անցնում էին բանաստեղծութեան մէջ։ Բոմանտիկ հեղինակը անկարող է սառնասրտութիւնով գրել մի ամենաաննշան բան անգամ։ Նա անդադար հիացման մէջ է և նրա բոբրոքւած ուղեղը ամեն ինչ իդէալացնում է։ Այս այն լիրիսմն է, որը, ինչպէս իրաւացի նկատում է նորագոյն կրիտիկոսներից մէկը, ամփոփում էր ոչ միայն բոմանը, այլ և կրիտիկան, այլ և պատմութիւնը։ Միշլէն (Michelet) իւր բազմահատոր պատմութեան մէջ մի հրաշալի բանաստեղծ է ձևանում, և ով որ կարդացել է նրա «Յեղափոխութեան պատմութիւնը», լաւ գիտէ, որքան բանաստեղծացրած են վաստերը, և հետեւաբար աղաւաղւած, որքան եսական է այս ամբողջ գրածքը։

Բոմանտիկ գրականութեան անօրինակ չաջողութիւնը բացատրւում է այս ոգեւորութիւնով և իդէալացումով։ Նոյն իսկ ոգեւորութիւնը և իդէալացումն, այն ինչ որ կոչւում է լիրիսմ, պիտի տապալէին բոմանտիստի շէնքը։

Տասնիններորդ դարը գիտութեան դար է։ Գիտական հետազոտութիւնների մեթոդը, այսինքն ճիշտ գիտական և փորձնական սխառմը, պիտի իշխէին դպրութեան վրա ևս, ինչպէս իշխում էին արդէն գիտութեան մէջ։ Նոր սերունդը անւած էր ճիշտ-դրական ոգով և նրա գործնական խելքը չէր կարող բաւականանալ երեւակայականով։ Նա իսկական ուսումնասիրութեան պահանջ էր զգում, բայց եղբւր նման մի կախարդական շրջանի մէջ էր ընկել նա, որտեղից թէև ցանկանում էր, բայց չէր վստահանում դուրս գալ։

Վիկտոր Հիւգօն հիպնոսել էր իւր դարը:

Այրօղջ գրական աշխարհ խոնարհուած էր այս կոլոսի առաջ-
շնչել նրա տաճ պրոգրամից աններելի յանցանք էր: Սերունդները
կրթուած էին Հիւգօի դպրոցում, որի ուսմունքը աստուածային յայտ-
նութեան պէս ընդունւած էր և պաշտուած: Ժամանակակից կրիտի-
կոսները հրաժարուած էին քննողատել բոմանտիսմի ուղղութիւնը
և նրա պարագլխի երկերը: Բոմանտիսմը մի արեգակ էր, որին միայն
չոքելոք և աչքերը խուփ կարելի էր մօտենալ, որպէս զի մարդ
չը կուրանար նրա ճառագայթներից:

Այս ընդհանուր թուլութեան մէջ մի ուրիշ հսկայ կամաց կա-
մաց բարձրացնում էր իւր գլուխը խաւարի միջից և մի նոր լապ-
տեր էր վառում, որի դեռ աղօտ լոյսը գնալով պիտի պայծառանար
ու խաւարեցնէր բոմանտիսմի փայլը:

Այս նատուրալիստ բոմանի հայր Բալզակն էր, որը չէր կարո-
ղանում անվրդով նայել սխալ դպրոցի ահռելի զարգացման վրա և
առաջինն եղաւ, որ հանդգնեց ձայն բարձրացնել երեսուն թւա-
կանների գրականական աստծու դէմ ու դատապարտել նրա ուղղու-
թիւնը:

Բալզակը իւր մասաղ հասակից սկսած անընդհատ հալածւել
էր իւր պարտատէրերից: Նա գրում էր իւր պարտքերը վճարելու հա-
մար: Այսպիսով Վարդկութեան կոմեդիաի հեղինակը, կարելի է
ասել, մանկութիւնից ընկած էր կեանքի կռւի մէջ և հանդիման
էր եղել նրա պահանջներին: Նա վաղօրօք ընկաւ կեանքի հնոցը,
որի միջից մարդ դուրս է գալիս աւելի գործնական: Հանդիպելով
զանազան դասակարգի պատկանող անձերի, ընկնելով զանազան շըր-
ջանների մէջ, Բալզակը մօտ ծանօթացաւ առօրեայ կեանքի հետ,
որի ուսումնասիրութեանը նա պիտի նւիրէր իւր ահագին տաղանդը:
Եւ դարիս այս մեծ վիպասանը, արհամարելով ժամանակակիցների հայ-
հոյանքը և վայր ի վերոյ զրպարտութիւնները, առանց աղմուկի
ամեն օր աւելի և աւելի ամրացնում էր իւր դպրոցի շէնքը: Եւ
ճշմարիտ որ Բալզակը նոր բոմանի պարագլուխը դարձաւ:

Նրա մտքով անցնում էր արդեօք, որ իւր այս մանրակրկիտ և
յաճախ տախտակալի Վեանքի նկարագրերով, նա ապագայ գրականու-
թեան նշանաբանն էր տալիս...

Նրա դրական խելքը մերժում էր այն անմարս դարմանը, որով անխնայաբար կերակրում էին ժամանակակից սերնդին: Նա բողոքեց լոմանտիսմի զգայնութեան չափազանցման դէմ, պախարակեց Հիւգօի անբնական, հակագիտական ուղղութիւնը և մի շարք բոմաններով ցոյց տուց, որ վիպասանի պարտքն է դրական նիւթեր ժողովել: 1830 թ. Հիւգօն լոյս ընծայեց իւր հռչակաւոր Հերնանի (Hernani) դրաման, որը իւր անբնական, շինծու դրութիւններով, հրէշային առասպելական հերոսներով, իւր անմարսելի, փքուն մենախօսութիւններով բեմ էր հանել բոմանտիսմի իւր բոլոր պակասութիւնների հետ: Բալզակը չը կարողացաւ զսպել իւր զայրոյթը և համարեա կրքով է յարձակոււմ այս դրամայի վրա ու ցոյց տալիս նրա անբնականութիւնը: Եւ մինչդեռ Վ. Հիւգօն սաւառնում էր երեւակացական աշխարում, Բալզակը համեստաբար իւր «կեանքի նիւթերն» էր ժողովում: Հետեւելով գիտութեան մեթոդին, մեծ բոմանտիստը մտքեց վէպի մէջ խիստ դիտական սխտեմը: Նա առաջինը եղաւ, որ նայեց իւր շուրջը, մօտ ծանօթացաւ շրջապատող իրերին և անձերին, հասկացաւ, որ, դարիս գիտնական ոգուն հետեւելով, պէտք է նկարագրել միայն այն, ինչ որ զննւած ու քննւած է:

«Երկար ժամանակ, ասում է Բալզակը իւր «Եւ աչի դուստր» բոմանի յառաջաբանի մէջ, հեղինակը (նա իւր մասին միշտ երրորդ դէմքով է խօսում) կարծում էր, որ իզուր էր գեղարւեստով և գիտութիւնով պարապում: Սակայն այժմ օրէցօր նա համոզւում է, որ սխալւել է, որ ամեն մի խղճմտաւոր աշխատանք վաղ թէ ուշ պիտի վարձատրւի... Հասարակութիւնը չը գիտէ, թէ որչափ աշխատանք է հարկաւոր հեղինակին ճշմարիտը իւր հետեանքներով երևան հանելու ու թէ որքան համբերութիւնով ժողոված գիտումներ են թագցրած այն առ. երես աննշան ածականների տակ, որոնք հազարից մէկի ուշադրութիւնը միայն կարող են գրաւել: Կան պատկերներ, որոնց մէջ մի որ և է նախադասութիւն մի ամբողջ գիշերւայ աշխատութեան, կամ բազմաթիւ հատորների ընթերցման վաստակն է: Ի՞նչ գիտէք, թէ բոլոր էջերն էլ այդպէս չեն գրւած...»

III

Այս վիպասանի գրածքներից ակներև է, որ նա հետաքրքրուած էր ժամանակակից բնագիտութեան զարգացումով: Նա մի առանձին յափշտակումով է խօսում մեծ բնագէտ և կենդանաբան Աիււիէի մասին, որին «դարիս ամենասքանչելի բանաստեղծն է» կոչում, որովհետև նա իւր բնածոյ (fossile) կենդանաբանութիւնով բիւրաւոր դարերի մեռած կեանքը կենդանացրեց:

Հիմնելով Լամարկի, Սենտ-Հիլէրի կարծիքի վրա, թէ շրջավայրի (среда) ազդեցութիւնը փոփոխում է կենդանու և մարդու ֆիզիկական և հոգեկան աշխարհը, նա աշխատեց բարձրացնել նկարագրութեան նշանակութիւնը, որպէս զի հասկանալի լինեն հերոսների գործերը:

Ն. իրական թոմանիստը ցանկացաւ նկարագրել մի ամբողջ պատմական շրջան, նա ցանկացաւ ճնկարագրել երկիրը, մարդկանց, ցոյց տալ օտարներին Ֆրանսիայի ամենաշքեղ քաղաքները և զիւղերը, պատմել տասնիններորդ դարի հին և նոր շէնքերի մասին, բացատրել այն երեք կառավարչական ձևերը, որոնք այս յիսուն տարւայ ընթացքում (1889 մինչև 1840 թ.) առանձին կերպարանքն տւել կահ-կարասիքին, բնակութեան և այլն: «Այսպիսով, աւելացնում է հեղինակը, 1850-ին ընթերցողը կը հասկանայ, թէ ինչ է եղել Պարիզը միապետութեան ներքոյ»:

«Քեռի Գորիօն» հեղինակը մեծ համեստութիւն է անում, 1850 թիւը դնելով: Նրա տենչանքը աւելի մեծ էր. — նա կը ցանկանար, որ իւր գործը յաւիտեան կանգուն մնայ:

«Պարիզի կեանքի պատկերներ», «Գաւառական կեանքի պատկերներ», «Մասնաւոր կեանքի պատկերներ», «Զինւորական կեանքի պատկերներ», պատկերներ և միշտ պատկերներ — ահա այն վերնագրերը, որոնց տակ հեղինակը մեզ մի շարք էփիւդներ է տալիս: Բալզակը կեանքի նիւթեր է ժողովում, ինչպէս ինքն էլ խոստովանում է: Նա կը դարսի այդ նիւթերը ահագին քառածալ հատորների մէջ, իւրաքանչիւրը 600 էջից բաղկացած: Այս մի հում նիւթ է, որից պատմաբանը, հնագէտը և հոգեբանը պիտի որոշ զաղափար կազմեն նկարագրած ժամանակի շրջանի մասին: Ն.,

վստահ իւր արդար հայեացքի վրա, Բալզակը Հիւզօի գլուխ-գործոցներին իւր գլուխ-գործոցներն է դիմադրում և բռնատիամի ամենափայլուն միջոցին՝ իւր ամենալուրջ բռնանները լոյս ընծայում։ Այս մի կտիւ էր երկու հսկաների մէջ, կեանքի և մահւան խնդիր էր։

Պատերազմի ելքը պիտի որոշէր ապագայ գրականութեան ուղղութիւնը։

Բալզակը յաղթեց։

Նրա 30-ական թւականներին գրած բազմաթիւ բռնանները այնպիսի մի հակառակ են ժամանակակից բռնանտիկ վէպերին, որ մարդ ճշմարիտ որ ապշում է այս դրողի վստահութեան վրա, որով նա մի գրչի շարժումով օտի տակ է տալիս թագաւորող գրական ձևերը։ Կան պատկերներ, որոնք մինչև այսօր էլ մնում են, իբրև գրական բռնանի կատարելատիպ։

Մի որ և է գրողի գործը քննելիս, հեշտ է որոշել նրա ամենաընտիր գրածքը, որին մենք գլուխ-գործեց ենք անւանում։ Բայց Բալզակի էտիւզները բոլորն էլ արժանաւորութիւններով և պակասութիւններով լի են։ Այս ինչ բռնանում այս ինչ պատկերն հրաշալի է, այս միւսը աւելի թույլ։ Ընդհանրապէս նրա մի որ և է բռնանը բաղկացած է մի շարք պատկերներից, որոնք երբեմն կապ չունեն միմեանց հետ, որոնք օրինակ ուղղակի պատմւում են, և ընդհանրապէս վէպերի հիւսւածքը չափազանց պարզ է։—Մի յատկութիւն, որը իսկոյն զանազանում է նոր դպրոցը հինից, որի բռնաններում գլխաւոր դեր էր խաղում արկածների բարդումն։

Սակայն կան և բռնաններ, որոնք կատարեալ տեղեկութիւն են տալիս մեզ որոշեալ դասակարգի կեանքի մասին։ Քեռի Գորիօն (Le père Goriot) ներկայացնում է մեզ Պարիզի պանսիօնների ներքին կեանքը, La femme Supérieure-ի մէջ հեղինակը նկարագրում է իւր ժամանակաւ գիւնականութիւնը, Les chouans-ի մէջ պատերազմական կեանքը և այլն։

Մի բան զարմացնում է ընթերցողին այս սուսար հատորները թերթելիս. Բալզակի վէպերի մեծ մասը կապւած են միմեանց հետ, զոնէ գործող անձերի միջոցով։ Միևնոյն անձնաւորութիւնները անցնում են համարեա բոլոր բռնաններում, շրջապատած մի շարք

ուրիշ անձերով, որոնց մենք արդէն պատահել ենք առաջիկայ գրքերում կամ յետոյ կը պատահենք: Այս անձնաւորութիւններից շատերի հետ ծանօթանում ենք Վերա Պորիօ (Le père Goriot) բոմանի մէջ, Վոքէի պանսիոնում, որը կատարեալ լուսանկար է Պարիզի աղքատիկ պանսիոններին:

Այստեղ ինքը խեղճ Քեռի Պորիօն է, որին երբեմն այցելում են նրա երկու աղջիկները՝ բարոնուհի դը Նիւսինժէն և կոմսուհի դը Ռետու: Այստեղ է սկսում իւր արշաւանքը դէպի հարստութիւնը և փառքը քսան տարեկան ուսանող Յօժէն դը Րաստինիակը: Այստեղ են յայտնի եղեռնագործ, աքսորից փախած Վոտրէնը, ապագայ հռչակաւոր բժիշկ Բիանշոնը և ուրիշները: Այստեղից, իբրև կենտրոնից, կը ցրւեն այս գործող անձերը տասնաւոր բոմաններում և կը շրջապատեն իրանց նորանոր անձնաւորութիւններով:

Վրանով նրա Վարքի էտիւզները նմանում է նեղ անցքերի մի հիւսածքի, որոնց կարելի է պատահել հանքերում կամ կառուկոմքներում: Մարդ կորչում է այնտեղ և այլ ևս ճանապարհ չի գտնում վերադառնալու, իսկ եթէ մի կերպով յետ է գալիս, ոչ մի որոշքան չի բերում իւր հետ: Այսպէս է ասում Սէնտ-Բէւը (Sainte-Beuve), դարիս ամենամեծ կրիտիկոսներից մէկը:

Ինչ էր ուզում անել Բալզակը իւր օտարտոի սխտեմով, մենք լաւ չենք ըմբռնում: Ասում են, որ նա ցանկանում էր կապել միմեանց հետ իւր բազմաթիւ ձեռնքի նկարագրերը, որպէս զի իւր ժամանակակից Ֆրանսիայի ամբողջ պատկերը տայ: Եթէ այդ էր նրա ձգտումը, ակներև է, որ նպատակին չը հասաւ:

Մի ուրիշ նշխարութիւն ներելի է:

Հիմնւելով իւր պաշտելի գիտնական թէօրիաի վրա, թէ կենդանիները փոխւում են միջավայրի ազդեցութեան ներքոյ, մեծ վիպասանը գուցէ կամեցաւ ցոյց տալ զանազան շրջանների ներգործութիւնը իւր հերոսների վրա: Յնորական բազմանք, որի լուծմանը հաղիւ թէ մօտեցել էր նա:

Ամենահաւանական ենթադրութիւնը գուցէ այն է, որ ինչպէս մի քանիսը պնդում են, ընօժեն Գրանդիէի հեղինակը այսպէս է վարւել առանց նպատակի և մտադրութիւն չի ունեցել կապել իւր վէպերը միմեանց հետ:

IV

Վերին աստիճանի հետաքրքրական է Բալզակի հերոսների ուսումնասիրութիւնը:

Նրա գլխաւոր գործող անձերը բացառական, կամ աւելի ճիշդ ասած՝ հաւաքական տիպեր են, որոնց մի խօսքով կարելի է բնորոշել—նրանք Շէքսպիրեան տիպեր են:

Դարիս ամենահեղինակաւոր կրիտիկոսներից մէկը, Տէնը, հիացումով է յիշում Բալզակի անունը: Եւրոպական գրականութեան մէջ նրան հաւասար միայն Շէքսպիրին է գտնում:

Եւ ճշմարիտ որ այս երկու հեղինակներն էլ տիպը մի տեսակ են կարծես հասկացել: Երկուսն էլ իրանց ստեղծած անձերի մէջ մի մեծ շարժառիթ են դնում, որը պիտի ղեկավարի նրանց գործունէութեանը:

Այն, ինչ որ Շէքսպիրը դրամայի մէջն արեց, Բալզակը կամեցաւ վէպի մէջ իրագործել:

Հետաքրքիր է համեմատել այս երկու գրողների համանման տիպերը: Այդպիսի տիպեր մի քանիսը կան:

Շէքսպիրի Արքայ Լիրին կարող ենք դիմադրել Քեռի Գորիօին և Շէյլոկին—Եօժեն Գրանդիէին:

Քեռի Գորիօն ապրում է մի աղքատ տան մէջ—տիկին Վոորէնի պարսիսնում: Նա վերմիշէլի առևտրի մէջ մեծ գումարներ է աշխատած և այդ բոլորը զոհած է իւր երկու աղջիկներին, որոնցից մէկին կոխ դը Բեստօի հետ է ամուսնացրած, միւսը բարոն դը Նիւսինժէնի: Երկու աղջիկների տներն էլ ճիս արիստոկրատ սալոններ են, որոնց մէջ հաւաքւում է բարձր դասակարգը ու որտեղ ուրեմն գռեհիկ ծեր Գորիօն մուտքը արգելած է: Սակայն, չը նայելով արտաքին ճոխութեանը, երկու քոյրերն էլ սաստիկ անբախտ են, մէկը կողմնակի սիրահարութեան պատճառով, միւսը՝ որ վատ չարաբերութիւններ ունի իւր ամուսնու հետ: Քեռի Գորիօն մի արտասովոր սիրով պաշտում է իւր երկու զաւակներին: Այս սէրը մի կիրք է, որը մոռացնել է տալիս հօրը՝ զաւակների անշնորհակալութիւնը: Այս սէրը ծերունու կեանքի միակ նեցուկն է դառնում, նրան է նւիրել խեղճը իւր հոգու բոլոր ոյժերը:

Քեռի Գորիօն իրան մի փոքրիկ զուամար էր պահել և յոյս ունէր այս դրամի տոկոսով ապրել մինչև մահ: Բայց աղջիկները պահանջներ ունին, մէկը իւր սիրականի պարտքերը վճարելու համար, որպէս զի փրկի նրան բանտից, միւսը իւր սիրականի համար կացարան վարձելու և այլն: Եւ ծերունին երջանկութիւն է համարում իւր դրամադրութից կտրել՝ զաւակների այս անվայել հաճութիւններին բաւականութիւն տալու համար: Քեռի Գորիօն կացարանը գնալով փոքրանում է և էժանանում...

Այս անսանձ հայրական սէրը այն աստիճան է հասնում, որ ծերունի Գորիօն համոզում է, աղաչում է նոյն պանսիօնում ապրող ուսանող Բաստինիակին սիրահարական չարաբերութիւններ սկսել իւր աղջիկներից մէկի հետ, որպէս զի նա մի քանի երջանիկ բուպէներ անցկացնէր: Այդ նպատակի համար նա իւր վերջին փողերն է ծախսում, արծաթեղէններն է ծախում, որ սիրահարների համար մի սիրուէն բնիկ սարգի Քեռի Գորիօն հիւանդանում է: Բժիշկը արգելում է նրան զուրա զալ տնից, բայց նրա ականջով է ընկնում, որ աղջիկներից մէկը բալի համար հազուստ է կարել տել, իսկ ամուսինը չի կամենում վճարել: Մեր Գորիօն ջարդում է իւր վերջին արծաթէ գդալները, հաւաքում է ինչ որ ունի մինչև վերջին կոպէկը և լրացնում է վճարելու զուամարը: Այս, որչափ երջանիկ է նա, որ իւր աղջիկը ետ չի մնալ բալի և ամենագեղեցիկը կը լինի այնտեղ!

Բայց հիւանդութիւնը սաստկանում է, դեղի և ուտելիքի փող չկայ, ծերունին մի կեղտոտ, նեղ, մութ խցի մէջ, կեղտոտ անկողնու մէջ մեռնում է: Երկու քոյրերը բացակայ են և, չը նայելով Բաստինիակի խնդրանքին, չեն դալիս իրանց հօր աչքերը խփելու: Մինչև վերջին շունչը ողորմելի հայրը սպասում է իւր աղջիկներին, իբրև Աստուծո ամենամեծ պարգևի... աղքատիկ դաճաղի ետեւից երկու ուսանող և մի ծառայ են գնում... Թաղման ծախսը այս ուսանողներն են անում...

Մենք չենք կասկածում, որ եթէ Շեքսպիրը Բալզակի ժամանակն ապրէր, նա Արքայ Լիրի փոխարէն Քեռի Գորիօն կը ստեղծէր... Նոյնը կարելի է ասել Եօթէն Գրանդէի մասին, որը նաուուրախներ Վենետիկի վաճառականն է:

Նօժէն Գրանդէն մի հարուստ գաւառական կալածատէր է, որի կալածները օրէցօր լայնանում են, ի հարկէ ամեն տեսակ միջոցներով, իսկ ոսկիները անուամբ Զընայելով իւր բազմաթիւ միլիոններին, Գրանդէն ժլատի կատերալատիպ է, որը ճարպի մոմ է վառում, ձմեռը օրերով կրակ չի անում, սանդուխտի խախտում, փթած տախտակները ինքն է կարկատում և իւր կնոջ ու միակ դստեր զրոշները զոդանում: Նա հանգիստ հոգով թոյլ է տալիս, որ իւր եղբայրը սնանկանայ և այն բոպէին, երբ այդ եղբայրը անձնասպանութիւն է գործում, Գրանդէն պաղարիւն իւր սանտիմների ետեւից է ընկած: Այս ինքնասպան եղբորորդուն մի բաժակ սուրճն անգամ խնայում է, և այս երիտասարդի հայրենական մի քանի ոսկեղէնները գնում է նրանից, հաշուելով, որ օգուտ կ'ունենայ:

Այստեղ մի տեսարան կայ, որը անկասկած աւելի զեղարւեստական է, քան թէ Նեքսպիրի դրամայի այն տեսիլը, որի մէջ Շէյլը զանակը սրում է, որ իւր պարտատէրից խոստացած ֆունտ միսը կտրի:

Գրանդէի եղբորորդին և դուստրը սիրահարւում են միմեանց վրա: Նօժէնին (աղջիկը) իւր կոպէկ-կոպէկ հաւաքած փողերը տալիս է իւր սիրահարին, որը պէտք է Հնդկաստան գնա, իսկ սա յանձնում է նրան իւր ամենաթանկագին գանձը, — իւր մօր զարդերը: Հայրը իմանում է իւր դստեր մեծահոգութիւնը և կատաղած ու իրան մոռացած՝ ամիսներով բանդարկած է պահում խեղճ աղջկան և հրամայում է, որ ցամաք հաց և ջուր միայն տան, չը նայելով իւր կնոջ կսկծի ձայնին և հիւանդութեանը:

Բայց այդ դեռ ոչինչ: Մի օր Գրանդէն ներս է մտնում այն բոպէին, երբ Նօժէնին բաց էր արել այս դանձը և դիտումէր սիրով: Ժլատի սարսափելի կիրքը բորբոքւում է. — նա վրա է հասնում այս ոսկիներին, վերցնում է դանակը և, անուշադիր իւր հիւանդ կնոջ և կիսակենդան աղջկայ յուսահատական ճիւղերին, պաղատանքներին, ուղղւում է կորզել զարդերը, որ տանի վաճառի: «Ի սէր Արարչին, ի սէր այն ամենին, ինչոր սուրբ է քեզ համար, զոչում է ձեռքերը կտորատելով խեղճ Նօժէնին, ընա ինձ պահ է տւել այդ, այդ իմ կեանքից թանգ է, սպասիր ինձ առաջ: Հրէշային հայրը խուլ է:

— «Ի՞նչ ինձ սպանել ես արդէն, զոնէ խղճայ միակ զաւակիդ, աղաչում է անխղճու միջից մեռնող կինը: — Ոչինչ:

Այս զարհուրելի ռուպէին, Եօթէնին մի ուրիշ դանակ է վերցնում, դէմ է անում իւր կրծքին և յուսահատութիւնից համարեա խելագարւած գոռում է.

— Հայր, եթէ դու ձեռ տաս այդ ոսկուն, ես այս դանակը կուրծքս կը խրեմ...

Այսպիսի զարհուրելի էջեր ես սակաւ եմ կարդացել:

Ես շտապում եմ կանգ առնել:

Բալզակի գործը ահագին է, այս յօդւածի փոքր ծաւալը թոյլ չի տալիս մեզ աւելի մանրամասն քննել նրան:

Սակայն մեր նպատակի համար կարևոր է մի քանի խօսք ևս ասել նրա ստիլի և գրելու ձևի մասին:

Բալզակի ռոմանները սո: բյեկաիւ գրւած քներեն: Համարեա բոլոր պատկերների մէջ մենք պատահում ենք հեղինակին, որը մեզ բացատրութիւններ է տալիս, նոր տեղեկութիւններ է հաղորդում, հերոսների գործերը և հոգեկան յուզմունքները մեկնում և այլն: Ընթերցողը զգում է, որ վիպասանը այնտեղ է, թաքնւած գործող անձերի քամակին և ամեն ռուպէ պատրաստ է առաջ գալ մեզ հարկ եղած տեղեկութիւնները տալու:

Իսկ ինչ վերաբերում է նրա լեզւին, պէտք է ասել, որ նա չի աշխատում կոկել իւր նախադասութիւնները և առհասարակ քիչ ուշ է դարձնում լեզւի ճոխութեան վրա: Այս կէտում նա նմանում է մի ուրիշ մեծ գրողի—Ստենդալին, որ Բալզակի ժամանակակիցն էր:

Կ

Ամփոփենք մեր ասածը:

Բալզակը աշխատեց մոցնել գրականութիւն մէջ գիտութեան զարգացման երկու անհրաժեշտ գործօնները.—գիտումն և փորձ: Այսպիսով նա աշխատեց ուսումնասիրել իւր նկարագրած շրջանները, որպէս զի մեզ Վեհանքի պատկերներն տայ: Այս շրջանների մէջ նա զբոսնում է իւր հերոսներին՝ ուժեղ, հաւաքական ¹⁾ անձեր, որոնք պիտի գործեն միջավայրի ազդեցութեան ներքոյ: Նա մի հսկայական իղձ ունէր.—փոփոխել իւր անձերի ֆիզիկական

¹⁾ Յետոյ մենք կը բացատրենք, թէ ինչն է հակահակ հաւաքական տիպեր ասելով:

և մտաւոր աշխարհը զանազան շրջանների ազդեցութեան ներքոյ, հետեւելով ժամանակակից բնագէտների թէօրիախն, որով կենդանին միջավայրի արդիւնք է դառնում:

Ինչ և իցէ, «Փիլիսոփայական Զրոյցներին» հեղինակը չը բաւականացաւ մի շրջանով: Նա աշխատեց ընդարձակել իւր «կեանքի ուսումնասիրութիւնը», տալ մեզ պատկերներ Պարիզի և զաւառների մասնաւոր և զինւորական կեանքերից: Այսպիսով նա անխտիր մտնում է Ֆրանսիայի ժամանակակից հասարակութեան բոլոր խաւերը իւր լուսանկարները վերցնելու համար:

Նրա տենչանքն էր այս մանր պատկերներից մի ժողովածու կազմել,— ժողովածու, որը թերթելով ապագայ սերունդները ծանօթանային Ֆրանսիայի քաղաքական կեանքի հետ... Այս մի վստահ ուղեղի ցնորք էր, որը մի զարմանալի զարկ պիտի տար իրական գրականութեան զարգացմանը:

Բալզակի անունը ոսկէ տառերով դրոշմւած կը մնայ XIX դարի գրականութեան յաղթականմարի ճակատին: Այս մեծ մարդը տապալեց բոմանտիսմը և նրա բեկորների վրա կառուցեց դրական, կամ աւելի ճիշտ ասած, գիտական վիպասանութեան վիթխարի պալատը:

Այս արտասովոր տաղանդի նշանակութիւնը մեր դարի գլխանութեան վրա այնչափ մեծ է, որ առանց նրան անկարելի է երևակայել անգամ արդի Ֆրանսիական բոմանտի այս վիթխարի զարգացումն:

Նա ինքը լաւ էր ըմբռնում իւր գործի մեծութիւնը, երբ ասում էր. «Զորս մարդ պէտք է ահագին ներգործութիւն ունենան այս (առաջին) կիսադարում. Նապոլէոնը, Կիւլիէն, Օ-Կոննէլը. ես կը կամենայի չորրորդը լինելը»:

Եւ այս մարդը երկու իղձ է ունեցել իւր աղմկալից կեանքում.— վճարել իւր անվերջանալի պարտքերը և Ֆրանսիական Դիտութիւնների Ազդեմիան մտնել:

Առաջինը նա իրագործեց, որովհետեւ այդ նրանից էր կախւած, իսկ երկրորդը մերժեց նրան մարդկային ապերախտութիւնը...